

11. Խորանարդի նիստերին գրված են 6-ից 11 թվերը: Երկու անգամ նետեցին և գումարեցին կողմնային նիստերի թվերը: Արդյունքում ստացվեցին 36 և 33: Ի՞նչ թիվ է գրված այն նիստի վրա, որը գտնվում է 10-ի դիմաց:

- 1)7 2)8 3)9 4) այլ պատասխան

12. Նավակը A վայրից B վայր լողում է 5 ժամում, իսկ B-ից A 7 ժամում: Քանի՞ ժամում կլողա լաստը A վայրից B վայր:

- 1)10 2)12 3)14 4) այլ պատասխան

13. Ֆերմերը իր 4 տղաներից առաջինին կտակեց իր հողատարածքի մեկ երրորդը, երկրորդին մեկ չորրորդը, երրորդին մեկ հինգերորդը: Ֆերմերը քանի՞ հեկտար կտակեց չորրորդ տղային, եթե նրա ունեցվածքը 100 հեկտարից քիչ էր և մակերեսը արտահայտվում և բնական թվով:

- 1)12 2)13 3)15 4) այլ պատասխան

14. Երբ Ձմեռ պապը իր նվերները դասավորում է արկղերում յուրաքանչյուրում 4-ական կամ 5-ական կամ 6-ական խաղալիք, ապա մի խաղալիք ավելանում է, իսկ եթե յուրաքանչյուր արկղում դասավորում է 7 խաղալիք, ապա ոչինչ չի ավելանում: Քանի՞ խաղալիք ուներ Ձմեռ պապը, եթե նրանց քանակը փոքր է 600-ից:

- 1)441 2)511 3)301 4) այլ պատասխան

15. Ի՞նչ թվանշանով է վերջանում $1^2+2^2+3^2+\dots+2021^2$ -ն :

- 1)1 2)5 3)6 4) այլ պատասխան

16. A և B քաղաքներից միաժամանակ միմյանց ընդառաջ դուրս եկան 2 մեքենա և հանդիպեցին B-ից 36կմ հեռավորության վրա: Հասնելով B և A անմիջապես հետ շրջվեցին և հանդիպեցին A-ից 18կմ հեռավորության վրա: Քանի՞ կիլոմետր է A և B քաղաքների հեռավորությունը:

17. Ունենք 5 կշռաքարեր, որոնց քաշը իրարից տարբեր բնական թվեր են: Հայտնի է, որ երկու ամենածանր կշռաքարերը միասին 2 անգամ ծանր են մնացած երեքից, իսկ 3 ամենածանր կշռաքարերը միասին 8 անգամ ծանր են, քան մյուս երկուսը միասին: Գտնել բոլոր կշռաքարերի հնարավոր ամենափոքր քաշն արտահայտող թիվը:

18. C ուղիղ անկյունով ABC եռանկյան AB ներքնաձիգը պարունակող ուղղի վրա եռանկյունուց դուրս նշված են M և K կետերն այնպես, որ $AM=AC$ և $BK=BC$: Գտնել $\angle MCK$ անկյան աստիճանային չափը:

19. Աշակերտների միջին գնահատականը մաթեմատիկայի թեստից 6 է: Աշակերտների 60%-ը հանձնել է թեստը: Հանձնողների միջին գնահատականը 8 է: Որքա՞ն է չհանձնողների միջին գնահատականը

20. A և B վայրերից միաժամանակ միմյանց հանդեպ շարժվեցին A-ից առաջին, իսկ B-ից երկրորդ մեքենան: 1 ժամ հետո առաջին մեքենան գտնվում էր A-ից մինչև երկրորդ մեքենա ճանապարհի մեջտեղում: A-ից դուրս գալուց քանի՞ րոպե հետո առաջին մեքենան կգտնվի B-ից մինչև երկրորդ մեքենա ճանապարհի մեջտեղում: